

Տ. ԿՈՄԻՏԱՍ ԱԲԵՂԱ ՀՈՎՆԱՆՅԱՆ

Հոգեգալստյան տոնին, մայիսի 14-ին, Վեհափառ Հայրապետը Մայր տաճարում կուսակրոն քահանա է ձեռնադրում 1976—1977 ուսումնական տարվա շրջանավարտ Կիրակոս սարկավագ Հովնանյանին:

Տ. Կոմիտաս աբեղան ծնվել է 1953 թվականին Երևանում, քահանայի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի № 79 դպրոցում:

1969 թվականին ընդունվել է Մայր Աթոռի հոգևոր ճեմարան և այն ավարտել 1977 թվականին՝ փայլուն հաջողությամբ:

1975 թվականի դեկտեմբերին սարկավաք է ձեռնադրվել՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

1976 թվականից հետևում է Երևանի Կոմիտաս վարդապետի անվան կոնսերվատորիայի խմբավարական բաժնի դասընթացներին:

Հոգևոր ճեմարանն ավարտելիս տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանի դիպլոմային աշխատանքի թեման է եղել՝ «Մակար Եկմալյանի կյանքն ու ստեղծագործությունը» (92 մեքենագիր էջ):

1978 թվականի ապրիլի 13-ին, հոգևոր ճեմարանում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կայացած հանդիսության ժամանակ, տ. Կոմիտաս աբեղան հանդես է եկել իր վերոհիշյալ ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ, և այն բննիչ հանձնաժողովի կողմից գնահատվել է «լավ»:

Տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանը հոգևոր ճեմարանում դասավանդում է հայկական նոտագրություն (խազագրություն) առարկան: